

նելու և առաւօտը կը զարթնի 1000 միլիոն բակտերիա մէջը։ Եւ եթէ այդքան բակտերիաներ շարենք իրար ետևից, կը ստանանք մի թել 100 վերստ երկարութեամբ։ Եթէ այսպէս ընդունենք, կը ստանանք, որ մի բակտերիան մօտ 100 միլիոն երկարութիւն ունի, մինչդեռ ամենահսկաները 30 միլիոնից աւելի մեծ չեն...»

Չնայած մի քանի անձշտութիւններին՝ այս գրքոյկը պէտք է համարել շատ օգտաւէտ մեր ժողովրդի համար։

## ԵՐ. ՍԱՐ.

Դ. Մանեգացցա՝ «Սիրոյ մեղմերը Խւ նոցա ծագումը», հոգեբանական հետազոտութիւն. թարգմ. երուանդ քահ. Նալբանդեան. Ալեքսանդրովով, 1903, գինը 10 կոտ.։

Այդ մեծահնչիւն վերնագրի տակ թագնուած է 53 փոքը-ըադիր երեսներից բաղկացած մի փոքրիկ գրքոյկ, ուր հեղինակի մի քանի վայրիվերոյ դատողութիւնների մէջ տղամարդկանց և կանանց փոխադարձ յարաբերութիւնների մասին չկայ հոգեբանական հետազոտութեան և ոչ մի նշոյլ։ Հայ ընթերցողը ոչ մի կորուատ չէր ունենայ, եթէ երուանդ քահանայ Նալբանդեանը նեղութիւն չքաշէր թարգմանելու այս գրքոյկը։ Թարգմանութիւններ անելիս երբէք չպէտք է շանալ այս կամ այն հեղինակի անունով. պէտք է ուշադրութիւն դարձնել միշտ գրքի արժանաւորութեան վրայ Նշանաւոր հեղինակներն անգամ ունեն թոյլ և աննշան գրուածքներ, որոնց թարգմանութիւնը լոկ ժամավաճառութիւն է։

Ահա Ե. ք. Նալբանդեանի թարգմանութեան լեզուից մի նըմուշ. «Բաղադրակարթութեանը, որը անարգել գնում է աւելի յառաջ ու յառաջ, մենք, նորա այլ բարերարութիւնների թւում, պարտական ենք դեռ և նրանով, որ նա ոչնչացրել է շատ ճանապարհներ և խորտակել է սէրը փաթաթող բազմաթիւ շղթաներ»։ Սա հայերէն բառերով զուտ ոռուաերէն նախադասութիւն է։ «Բանալու գիւտը իրենից յետոյ բերեց համարանալու (օտմայքե) գիւտը»։ Ի՞նչ է նշանակում. այս կտորը կարող է հասկանալ գուցէ ինքը թարգմանիչը միայն և ոչ ոք աւելի։ Բացի սրանից՝ թարգմանութեան լեզուի մէջ տեղատեղ գործ են ածուած աղճատուած գաւառական բառեր, ինչպէս՝ թիսդ տալ, ճուղքեր, քեցել ևայլն։

Դրբոյի սրբագրութիւնը կատարուած է շատ անհոգ կերպով։

## Ա. Մ.